Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2025թ. օգոստոսի 30-ի թիվ 1 նիստում

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«30» օգոստոսի 2025թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների գիտահետազոտական աշխատանքի (այսուհետ՝ գիտահետազոտական աշխատանք) կատարման պահանջներն ու ձևերը:
2. Սույն կարգը ընդունվում, փոփոխվում և գործողությունը դադարեցնում է ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:
3. Կարգը բխում է ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրից և համապատասխանում է «Գավառի պետական համալսարանի առկա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ»-ին, «Գավառի պետական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների ամփոփիչ ատեստավորման կարգ»-ին, «Գավառի պետական համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման միասնական հայեցակարգ»-ին, այլ ներբուհական իրավական ակտերին:
4. Գիտահետազոտական աշխատանքը պարտադիր է մագիստրատուրայի ուսանողների համար և իրականացվում է ուսումնական պլանով սահմանված արտալսարանային ժամանաքանակի հաշվին՝ գիտական ղեկավարի առաջադրանքով:
5. Գիտահետազոտական աշխատանքի ձևերը, ծավալը և բովանդակությունը որոշվում են համապատասխան մասնագիտական ամբիոններում՝ համաձայն մագիստրոսական կրթական ծրագրի բնույթի ու առանձնահատկությունների, և արտահայտվում են համապատասխան փաստաթղթերում:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Գիտահետազոտական աշխատանքի կատարման նպատակներն են.
   1) խորացնել մագիստրատուրայի ուսանողների մասնագիտական գիտելիքները,
   2) զարգացնել նրանց հետազոտական հմտությունները, իմացական, տրամաբանական, որոնողական, վերլուծական և ստեղծագործական կարողությունները,
   3) նպաստել մագիստրոսական թեզի պատշաճ կատարմանը, թեզի թեման ուսումնասիրելիս՝ գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր և մասնագիտական մեթոդների կիրառմանը,
   4) նպաստել տեսական գիտելիքների գործնական կիրառմանը՝ խթանելով ուսանողների մոտ մասնագիտական խնդիրների լուծման գործընթացում գիտահետազոտական մոտեցումներ ցուցաբերելու կարողությունների զարգացմանը:

III. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ

7. Համալսարանի մագիստրատուրայի ուսանողների գիտահետազոտական աշխատանքն իրականացվում է գիտական ղեկավարների առաջադրանքով և բովանդակային ու մեթոդական ղեկավարությամբ:

Այն ներառում է ուսուցողական, գիտահետազոտական բնույթի ներքոհիշյալ ձևերով առաջադրանքներ.

1) մասնագիտական գրականության ուսումնասիրություն, տվյալների մշակում, համեմատական վերլուծություն, ինքնուրույն գիտական եզրակացությունների կատարում,
2) նախագծային աշխատանքներ՝ զեկուցումների, ելույթների պատրաստում, բանավեճերի ու քննարկումների համար նյութերի մշակում, նախագծերի կազմում, 3) հետազոտական աշխատանքներ՝ ռեֆերատների, էսսեների, զեկուցումների պատրաստում և մասնագիտական լսարանին դրանց ներկայացում, մասնակցություն գիտաժողովներին,
4) գիտական հոդվածների պատրաստում, ներկայացում և համապատասխան ամբիոնի երաշխավորման դեպքում՝ թղթային կամ էլեկտրոնային հրապարակում:

8. Ելնելով կրթական ծրագրի բնույթից և առանձնահատկություններից՝ կարող են կիրառվել նաև ուսանողների գիտահետազոտական աշխատանքների այլ ձևեր, որոնց արդյունքում պարտադիր է գիտական հոդվածի պատրաստումը և հրապարակումը:

9. Մագիստրոսական կրթական ծրագրի ընթացքում գիտահետազոտական աշխատանքի կատարումը և դրա արդյունքում առնվազն 2 գիտական հոդվածների հրապարակումը

պարտադիր է՝ ուսանողների ավարտական տարվա կիսամյակային հաշվետվությունների դրական եզրակացության, նաև մագիստրոսական թեզի նախապաշտպանությանը, ապա պաշտպանությանը մասնակցության թույլտվություն ստանալու համար:

IV. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Համալսարանի մագիստրատուրայի ուսանողների գիտական հոդվածների թեմաները պետք է լինեն արդիական, ունենան տեսական և /կամ կիրառական նշանակություն,
11. գիտական հոդվածը պետք է ունենա հստակ ձևակերպված հետազոտական խնդիր, նպատակ և մեթոդաբանական բավարար հիմքեր, պետք է բաղկացած լինի ներածական, հիմնական և եզրափակիչ մասերից, բովանդակի մասնագիտական գրականության վերլուծություն, եզրակացություններ և առաջարկություններ,
12. գիտական հոդվածը պետք է պարունակի ուսանողի կողմից իրականացված ինքնուրույն վերլուծություն, փորձարարություն կամ դաշտային հետազոտություն և գիտական նորույթի որոշակի տարրեր ունեցող արդյունք,
13. գիտական հոդվածը պատրաստելիս, ինչպես նաև գիտահետազոտական այլ աշխատանք կատարելիս՝ պետք է պահպանել ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի պահանջները, գիտական էթիկայի նորմերը, ներառյալ աղբյուրների ճշգրիտ մեջբերման և գրագողության բացառման կանոնները,
14. գիտական հոդվածը պետք է ձևակերպվի մասնագիտական լեզվով, լինի գրագետ շարադրված, ունենա ամփոփագիր՝ առնվազն 150 բառ ծավալով, որը կներկայացնի հետազոտության թեման, նպատակը, մեթոդները, հիմնական արդյունքները, ամփոփագրից հետո պետք է ներկայացվեն 5-ից 10 բանալի բառեր,
15. գիտական հոդվածում պետք է ճշգրտորեն օգտագործել մեջբերումները և տալ հղումներ, հոդվածը պետք է ավարտվի օգտագործված գրականության ցանկով կամ տվյալ ոլորտի համար ընդունված այլ ձևաչափով,
16. գիտական հոդվածի ծավալը կարող է լինել 5-ից 8 էջի սահմաններում,
17. գիտական հոդվածի կատարման ժամանակացույցը պետք է համապատասխանի տվյալ մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանին և ամբիոնի կողմից նախատեսված պահանջներին,
18. հոդվածը կարող է հրապարակվել միայն դրական գրախոսության դեպքում՝ աշխատանքի բովանդակությունը, հավաստիությունը և ինքնուրույնությունը ստուգելուց հետո: